



«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ
Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

N° 143
04 նոյեմբեր 2021թ

Հ Հ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի պահանջը, կից Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին, քանի որ 2022 թվականի փետրվարի 9-ին լրանալու է տնօրենի պաշտոնավարման ժամկետը:

Կից՝ խորհրդի որոշման պատճենը և մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը:
Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝
Խորհրդի նախագահ

Ռ. Զուլոյան

ՈՐՈՇՈՒՄ

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 2-ին կայացած նիստի (N 3 արձանագրություն)

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 6-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ.

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

/Ջեկուցող՝ խորհրդի նախագահ Ռ. Զուլյան /
Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319 որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերի պահանջները՝

Խորհուրդը որոշում է՝

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) տնօրենի պաշտոնի համար 2021 թվականի դեկտեմբերի 7-ից հայտարարել մրցույթ:

2. Հաստատել տնօրենի պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am կայքում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N174-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /փաստաթղթերի/ ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի անդամներ Արփինե Սեդրակյանին և խորհրդի քարտուղար Սուսաննա Թաթոյանին:

5. Մրցույթն անցկացնել Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոցի շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2022 թվականի հունվարի 12 - ին ժամը 14⁰⁰-ին:

6. Հանձնարարել խորհրդի նախագահ Ռ. Զուլյանին՝ կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի սույն որոշման պատճենը և հայտարարության տեքստը մինչև 2021 թվականի նոյեմբերի 5-ը, պատշաճ կարգով և պաշտոնական գրությամբ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարին և Գեղարքունիքի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝  Ռ. Զուլյան

Խորհրդի քարտուղար՝  Ս. Թաթոյան

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N° 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N° 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N° 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար՝ անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը
- 2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
- 3) հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը
- 4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով
- 5) ինքնակենսագրություն:

Փապտաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N° 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 16:30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հունվարի 12-ին՝ ժամը 14:00-ին** «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N° 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար դիմել 094-93-56-36 հեռախոսահամարով կամ gagikes-60@mail.ru էլեկտրոնային հասցեով: